

Տեղեկանք

«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխության վավերացման նպատահարմարության վերաբերյալ

Կիզալիի ուղղումը՝ «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի «Օզոնային շերտը քայքայող նյութերի (ՕՔՆ) մասին» Մոնրեալի արձանագրության 5-րդ ուղղումն է: Ուղղումն ընդունվել է Մոնրեալի արձանագրության Կողմերի 28-րդ հանդիպմանը, որը տեղի է ունեցել 2016թ-ի հոկտեմբերի 15-ին Ռուանդայի մայրաքաղաք Կիզալիում: Այս ուղղումով Արձանագրությամբ կարգավորվող նյութերի ցանկում ավելացվել են հիդրոֆտորածխածինները (ՀՖԱ):

Մինչև վերջերս, Մոնրեալի արձանագրությունը վերահսկել է օզոնային շերտը քայքայող նյութերի (քլորֆտորածխածիններ (ՔՖԱ) և հիդրոֆտորածխածիններ (ՀՔՖԱ) և այլ նյութերի) շրջանառությունը: (ՔՖԱ-ները 2010թ.-ին հանվեցին համաշխարհային տնտեսական գործընթացից ամբողջությամբ, իսկ ՀՔՖԱ-ները դուրս են բերվում գործածումից ներկայումս: Դրանք շատ դեպքերում փոխարինվում են ՀՖԱ-ով: Կիզալիի ուղղումը նախատեսում է ՀՖԱ-ների գործածման փուլային կրճատում:

Օզոնաքայքայիչ նյութերին այլ ընտրանք հանդիսացող ՀՖԱ-ների օգտագործում նարագորեն աճում է: ՀՖԱ-երը, հանդիսանալով հզոր և երկարակյաց ջերմոցային գազեր, հայտնվելով մթնոլորտում՝ նպաստում են կլիմայի փոփոխությանը:

ՀՖԱ-ների փուլային փոխարինման միջոցով ակնկալվում է կանխել մոտ 105 մլն տոննա ածխածնի երկօքսիդին համարժեք ջերմոցային գազերի արտանետումները, ինչը կօգնի մինչև 2100թ-ը ակնկալվող ջերմաստիճանի գլոբալ բարձացումը նվազեցնել մինչև 0.5 աստիճանով՝ զուգահեռ շարունակելով պահպանել օզոնային շերտը:

Ուղղման համաձայն՝ Մոնրեալի արձանագրության կողմերը պարտավորվում են աստիճանաբար նվազեցնել ՀՖԱ-ների օգտագործումը՝ 2040թ-ին այն կրճատելով 80-85%-ով: Զարգացող երկրների մեծամասնության, այդ թվում նաև՝ Հայաստանի համար, նախատեսված է ՀՖԱ-ների գործածման փուլային կրճատման ստորև ներկայացված ժամանակացույցը.

2024թ.՝ ՀՖԱ-ների օգտագործման սառեցում բազային մակարդակի վրա

2029թ.՝ 10% կրճատում,

2035թ.՝ 30 %,

2040թ.՝ 50%,

2045թ. (թիրախ)՝ 80 %:

Ներկայումս, որպես ՀՖԱ-ների փոխարինողներ դիտարկվում են օգոնային շերտը չբայքայող նյութեր՝ կլիմայի վրա նվազագույն ազդեցությամբ,ինչպիսիք են ամոնիակը կամ ածխածնի երկօքսիդը: Մշակվում են բարձր շահավետությամբ սառնարանային տեխնոլոգիաներ, որոնք չեն ազդի կլիմայի վրա՝ ՀՖԱ արտանետումների նվազեցման և էներգիայի խնայողության հաշվին:

ՀՖԱ-ների փոխարինման գործընթացի համար նախատեսված է նաև ֆինանսական մեխանիզմ: Մասնավորապես, դոնոր երկրները համաձայնություն են ձեռքբերել ՀՖԱ-ների գործածման կրճատման ֆինանսավորման անհրաժեշտության հարցում: Ենթադրվում է, որ դրա համար կպահանջվի միլիարդավոր դոլարներ: Հայաստանի կողմից Կիգալիի ուղղման վավերացումը կարևոր է ոչ միայն բնապահպանական տեսակետից: Այն կնպաստի նաև վերը նշված ֆինանսական մեխանիզմների շնորհիվ ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմանը:

Հարգանքով՝



Ա.Մինասյան